

ՈԱՄԹԱՆ ԼՄԱՄՐԱ. «ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԽԻՍՏ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՍՈՒՐԻՈՅ»

Երեքշաբթի, 26 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Նախագահ Պաշտար Կլ-Ասատ ընդունեց Ալճերիոյ արտաքին գործոց Նախարար Ռամթան Լմամրան:

Սուրիոյ եւ Ալճերիոյ միջեւ եղբայրական եւ պատմական յարաբերութեան ամրապնդումը Նախագահ Ասատին եւ Լմամրայի խորհրդակցութեան գլխավոր վերնագիրն էր:



Նախարար Լմամրա Նախագահ Ասատին փոխանցեց Ալճերիոյ Նախագահ Ապտուլ Մաճիտ Թապայունի Նամակը, որուն մէջ վերջինը շեշտած էր երկու երկիրներուն միջեւ գործակցութեան զարգացման եւ խորհրդակցութեան գոյատեւման կարեւորութիւնը, յատկապէս Ալճերիոյ մէջ տեղի ունենալիք արաբական գագաթնաժողովին շրջագիծին մէջ,

որուն իր մասնակցութիւնը պիտի բերէ Սուրիան:

Իր կարգին Նախագահ Ասատ իր ողջոյնները փոխանցեց Ալճերիոյ Նախագահին եւ շնորհակալութիւն յայտնեց երկրի ղեկավարութեան եւ ժողովուրդին՝ Սուրիոյ զօրակցութեան եւ հաւատարիմ գործակցութեան համար, աւելցնելով, որ Սուրիա կը ձգտի Ալճերիոյ հետ գործակցութեան հորիզոնները ընդլայնել եւ եղբայրական յարաբերութիւնը ամրապնդել:

Անդրադառնալով Արաբական Լիկային, Նախագահ Ասատ ըստ. «Արաբական Լիկան արաբական իրավիճակին հայելին է: Սուրիոյ մէջ մեզ կը հետաքրքրէ միջարաբական գործակցութիւնը, ուստի բարձր կը գնահատենք Ալճերիոյ կեցուածքն ու մշտական գործակցութիւնը Սուրիոյ հետ»:

Իր կարգին Նախարար Լմամրա շեշտեց, որ Սուրիա արաբական հարթակին անփոխարինելի մասնիկն է եւ Արաբական Լիկայի հիմնադիր անդամ: Ան հաստատեց, որ արաբական աշխարհը խիստ կարիքը ունի Սուրիոյ, աւելցնելով, որ Արաբական Լիկայի յառաջիկայ գագաթնաժողովին որպէս Նախապատրաստութիւն՝ Ալճերիա Սուրիոյ հետ պիտի համադրէ արաբական եւ միջազգային հարցերու շուրջ քննարկելի բոլոր հարցերը:

ՀՄԸՄ-Ի ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ ՀԱՄԱՀԱՄԱՐՈՒՄ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ

Չորս տարին անգամ մը կազմակերպուող Համահարկ Մարզական մարզախաղերը կը հանդիսանան ՀՄԸՄ-ական մարզիկներուն համար այն սպասելի եւ բերկրալի առիթը, որուն ընթացքին անոնք հայաբոյր մրցակիցներու մէջ իրենց մարզական կարողութիւնները ի յայտ կը բերեն, կը մրցակցին եւ տարբեր շրջաններէ ժամանած ՀՄԸՄ-ական քոյրերու եւ եղբայրներու հետ նոր բարեկամութիւններ կը հաստատեն:



Այս տարի, հակառակ երկրի տնտեսական ծանր վիճակին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ շրջանը 48 մարզիկներէ բաղկացած պատուիրակութեամբ կը մասնակցի Համահարկ Մարզական 11-րդ մարզախաղերուն, որոնք տեղի կ'ունենան 20 Յուլիսէն մինչեւ 30 Յուլիս 2022, Հայաստան:

ՀՄԸՄ-ական սուրիահայ մարզիկները իրենց մասնակցութիւնը կը բերեն պասքէթի տղոց եւ աղջկանց խմբային եւ անհատական ձիրքերու մրցումներուն, ինչպէս նաեւ ֆութպոլի, ֆուսսալի եւ ճատրոկի մրցումներուն:

Սուրիահայ ՀՄԸՄ-ականները մասնակցութեան չգրկելու եւ քաջալերելու համար, ԱՄՆ-ի, Զանաւախի եւ գանազան շրջաններէ բարերարներ, յատկապէս քանադաւա թիւրքալի Մանուկ Չուխաճեան, իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը տրամադրեցին ՀՄԸՄ-ի Սուրիոյ մարզիկներուն, որուն համար մեր սրտագին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը կը յայտնենք:

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւն

ՀԱՄԱՀԱՄԱՐՈՒՄ 11-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՄ ԲԱՅՄԱՆ ՄԵՏԱՇՆՈՒՄԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԳՆԱՎԱՌՈՒԹԻՒՆ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐՊԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԵՆ, 850 ՄԱՍՆԱԿՅԻՆԵՐՈՎ ՇՔԵՂ ՏՈՂԱՆՅՔ ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄ «ԱԶՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

Հայութեան «կամաւոր բանակ»-ը՝ ՀՄԸՄ-ը 23 Յուլիսին, Երեւանի մէջ արժանավայել շուքով կատարեց իր մարզախաղերուն բացումը, անգամ մը եւս փաստը տալով, որ ինչքան ալ դժուար ու ծանր պայմաններ դիմագրաւեն մեր ժողովուրդն ու հայրենիքը, ՀՄԸՄ-ը կը մնայ այն երիտասարդ ու կենսունակ միութիւնը, որ գիտէ յոյս, խանդավառութիւն եւ աւելի լաւ ապագայ ներշնչել բոլորին: 104-ամեայ այս միութիւնը չի ծերանար, յոգնութիւն չի ճանչնար եւ կը շարունակէ իր հիմնադիրներու ուղին՝ հաւատարիմ մնալով տեւաբար բարձրանալու եւ զինք ծնող ժողովուրդն ալ իր հետ բարձրացնելու աւելի քան մէկ դարեայ նշանաբանին:



Հայ մարդը արդար հպարտութեամբ եւ գոհունակութեամբ հետեւեցաւ համահարկ Մարզական 11-րդ մարզախաղերու բացման հանդիսութեան, որ ընթացք առաւ երեկոյեան ժամը 6-ին, Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ մարզախաղերու ջահին բոցավառումով: Ապա, փոխանցվածքով, եօթը ՀՄԸՄ-ականներ՝ Նարայէ Բժշկեան (Արեւմտեան Մ.Ն.), Ճոն Եղիակ (Ֆրանսա), Ալէքս Պետիկեան (Զանաւախ), Լէա Պուտազեան (Լիբանան), Մայքըլ Պալթայեան (Արեւելեան Մ.Ն.), Գարուն Պողոսեան (Աւստրալիա) եւ Միրէլլա Չափարեան (Սուրիա) փոխն ի փոխ վազքով ջահը Ծիծեռնակաբերդէն հասցուցին «Ազատութեան» հրապարակ, ուր երեկոյեան ժամը 7.30-ին տեղի ունեցաւ բացման պաշտօնական հանդիսութիւնը:

Նախքան հանդիսութիւնը, մարզախաղերու մասնակից պատուիրակութիւններու 645 մարզիկ-մարզիկուհիները Մաշտոցի անուան Մատենադարանի առջեւէն շքերթով մը ուղղուեցան բացման հանդիսավայր՝ «Ազատութեան» հրապարակ: Շքերթը առաջնորդեց ՀՄԸՄ-ՀԱՄԿ-ի սկաւտական շքախումբը: Հրապարակին մօտակայ պողոտային մէջ, շքերթի մասնակիցներուն միացան «Հրաշք» մարզախաղերու մասնակից, յատուկ խնամքի կարօտ 200 պատանի-երիտասարդներ, ընկերակցութեամբ իրենց օժանդակող աւելի քան 50 կամավորներու:

ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

Բացման հանդիսութիւնը իրենց ներկայութեամբ պատուեցին Հայաստանի մօտ հաւատարմագրուած Արժանթինի, Իրաքի եւ Սուրիոյ դեսպանները, ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան, ՀՀ Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ Սիմոն Սիմոնեան եւ Բագրատ Եսայեան, ՀՕՄ-ի եւ Համագայինի Կեդրոնական Վարչութիւններու եւ Հայաստանի կառոյցներու ներկայացուցիչներ, Համահայկական Կոմիտէի անդամ Վրէժ Շառոյեան, Հայաստանի մարզական ֆետերասիոններու պատասխանատուներ, ՀՄԸՄ-ի ներկայ եւ նախկին Կեդրոնական Վարչութիւններու անդամներ, ՀՄԸՄ-ի բարերարներ, բարեկամներ, «Փիւնիկ» միութեան Նախագահ Յակոբ Աբրահամեան եւ Արցախեան պատերազմներու ՀՄԸՄ-ական նահատակներու հարազատներ:



Հանդիսութիւնը ընթացք առաւ մարզախաղերու մասնակից պատուիրակութեան համար, որոնք մարզախաղերու մասնակից պատուիրակութեան համար այն սպասելի եւ բերկրալի առիթը, որուն ընթացքին անոնք հայաբոյր մրցակիցներու մէջ իրենց մարզական կարողութիւնները ի յայտ կը բերեն, կը մրցակցին եւ տարբեր շրջաններէ ժամանած ՀՄԸՄ-ական քոյրերու եւ եղբայրներու հետ նոր բարեկամութիւններ կը հաստատեն:

Հանդիսութիւնը ընթացք առաւ մարզախաղերու մասնակից պատուիրակութեան համար, որոնք մարզախաղերու մասնակից պատուիրակութեան համար այն սպասելի եւ բերկրալի առիթը, որուն ընթացքին անոնք հայաբոյր մրցակիցներու մէջ իրենց մարզական կարողութիւնները ի յայտ կը բերեն, կը մրցակցին եւ տարբեր շրջաններէ ժամանած ՀՄԸՄ-ական քոյրերու եւ եղբայրներու հետ նոր բարեկամութիւններ կը հաստատեն:

Շար.՝ Էջ 5

Խմբագրական

ԼԻԶՊՈՆԻ ԶԻՆԳ ԶԵՐՈՍՆԵՐՈՆ ԶԱՅՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԱԶԳ ԸԼԼԱԼՈՒ ԶԱՆԳԱՄԱՆԵՐՈՆ ՊԱՐԶԵՑԻՆ

Հայոց Տեղասպանությունը կազմակերպողները փորձեցին հայ ազգը բնաջնջել, սպանդի ենթարկելով անոր ստուար մեկ մասը: Տեղասպանության մնացորդացը, սակայն, Սփիւռքի մեջ տարածուելով կազմակերպուեցաւ: Կազմակերպուելով դարձաւ ազգային իրաւունքներու պաշտպանն ու Հայ Դատի հետապնդման յառաջադէմ տարրը:

Հայոց Տեղասպանութեան յիսնամեակը, ապա նաեւ 100-ամեակը եկան վկայելու, որ հայութիւնը մեկ ազգ է ու տարտղնուած ըլլալով մեկտեղ կը հետապնդէ մեկ նպատակ՝ ազգի ու հայրենիքի իրաւունքներու ձեռքբերում, որպէսզի կարելի ըլլայ համախմբել հայութիւնը պայտեական իր ամբողջական հողերուն վրայ եւ անոր գոյութիւնն ու զարգացումը երաշխաւորել:

Եթէ հայրենի մեր ժողովուրդը կը պայքարէր անկախ Հայաստանի ու Արցախի համար, Սփիւռքի մեջ Հայ Դատի պաշտպանները ժամանակի համապատասխան բոլոր միջոցներն ու քաղաքական լծակները օգտագործելով, անձնագոհութեամբ, լոպիինկի աշխատանքով, քաղաքական գործունէութեամբ իրենց կարելին ի գործ կը դնէին հայութեան եւ Հայաստանի իրաւունքներու վերականգնումին համար:

Այս բոլորը մեկ պարունակի մեջ պահելու ռազմավարութիւնը եական էր հայութեան համար: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամասնութիւնը այս նպատակին ծառայելու կոչուած էր: Իւրաքանչիւր ունէր իր ընելիքը, իր լծակներով ու կարելիութիւններով, սակայն ներքին համադրումի մը մարտավարութեամբ:

Լիզպոնի ողջակէզները իրենց կեանքը նուիրեցին հայ ժողովուրդի դատին, այնպէս ինչպէս Արցախի ու Հայաստանի ազատամարտիկները: Հայրենազ ուրկ ապրելէ յոգնած ու հայրենիք ունենալու տենչով ապրած հինգ երիտասարդները այդ տարիներուն զինեալ պայքարը միակ միջոցը համարեցին Հայ Դատին նկատմամբ միջազգային ընտանիքի լռութեան պատը քանդելու: Ու յաջողեցան քանդել գայն:

Հետագային, Հայաստանի անկախացումով, Արցախի ազատագրումով, Հայ Դատի ու Հայաստանի շահերը համատեղ հետապնդելու միասնական մարտավարութիւն մը գարգացաւ: Հայրենիքը իր լծակներով, Սփիւռքը՝ իր:

Այս միասնութիւնը թրջական կողմին հաճելի չթուեցաւ, որովհետեւ ան միանգամայն վերացած կ'ուզէր տեսնել Տեղասպանութեան ժառանգորդներն ու անոնց հետապնդած դատը, շարունակել կ'ուզէր համաթուրանական իր ծրագիրը, որուն համար ալ պարտուողական դիրքի մեջ, Սփիւռքէն միանգամընդմիջտ անջատուած կ'ուզէր տեսնել Հայաստանը, առանց իմանալու, որ Սփիւռքի ու Հայրենիքի մեջ մեկ ազգ կը գոյատեւէ, որ հայրենի ժողովուրդին նկատառելի մեկ մասն ալ վանեցի, սասունցի, տիգրանակերտցի կամ այլ հայրորդիներու շառաւիղներէն կազմուած է, իսկ Սփիւռքի մեջ արեւելահայերու ստուար թիւ մը գոյութիւնն ունի: Այլ խօսքով հայ ազգը մեկ է՝ հայրենի թէ սփիւռքեան իր թելերով ու մեկ հեռակայ նպատակ կը հետապնդէ:

Թուրքիոյ համար եական էր Սփիւռքի անտեսումը, Հայաստանի քաղաքական դաշտէն անջատումը եւ ընդհանրապէս Սփիւռք-հայրենիք կապերու խզումը: Թուրքիոյ այս մարտավարութիւնը տարրու տարի յստակ կը դառնար:

Ցաւօք ներկայ իշխանութիւններու օրերուն այս քաղաքականութիւնը ազդած կը թուի ըլլալ նաեւ հայրենի իշխող տարրին վրայ, որովհետեւ Հայաստանի եւ Սփիւռքի յարաբերութիւններու ձեւն ու ոճը կը փոխուին, Սփիւռքի հետ գործակցութիւնը կը վերածուի Սփիւռքը կառավարելի գործօն դարձնելու եւ միայն Հայաստանի իշխանութիւններու նպատակներուն ծառայեցնելու ցնորամտութեան: Աւելին. Սփիւռքը ընդհանրապէս հայ ժողովուրդի քաղաքական կեանքէն հեռացնելու ծրագիր մը կը պարզուի մեր միգամած հորիզոնին վրայ:

Քաղաքականութեան մեջ իրապաշտ ըլլալը չ'ենթադրէր երբեք ազգի ու պետութեան հեռահար նպատակներու անտեսումը եւ անոնց հասնելու բոլոր ճամբաներու քանդումը:

Ազգային պետականութեան հաստատումով միայն կարելի է համախմբել ողջ հայութեան կարելիութիւնները եւ առողջ իրապաշտութեամբ ծառայեցնել զանոնք հայոց պետութեան ու հայ ազգին շահերուն:

Լիզպոնի հինգին պատգամը ուղղուած չ'էր միայն արտաքին աշխարհին: Անոնք կոչ կ'ուղղէին նաեւ հայութեան տարբեր հատուածներուն՝ սթափ ըլլալու եւ համատեղ ջանքերով տիրութիւն ընելու մեր ազգի ու հայրենիքի իրաւունքներուն, ոչ թէ անջատելու Սփիւռքի եւ Հայրենիքի հեռահար նպատակները, ոչ թէ ազգային միասնութիւնը զգացապաշտութեան շպարով նսեմացնելու:

Աշխարհաքաղաքական ներկայ վերիվայրումներուն մեջ, Լիզպոնի օրինակը Սփիւռք-Հայրենիք գործակցութիւնը ամրապնդելու եւ գայն համընդհանուր մեկ նպատակի ծառայեցնելու հրամայականը կը յուշէ:

«Գ.»

-Երկուշաբթի, 25 Յուլիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ դոկտ. Լուսա Սայրոսի եւ դոկտ. Մուհամմետ Չանայուաա երկուսն արարողութիւն կատարեցին Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատին դիմաց՝ որպէս Հասիլէի եւ Համայի նորանշանակ նահանգապետներ:



Յետ երկուսն արարողութեան, Նախագահ Ասատ հանդիպում ունեցաւ նորանշանակ նահանգապետներուն հետ եւ անոնց յաջողութիւն մաղթեց իրենց ստանձնած պաշտօններուն մեջ:

Արարողութեան ներկայ էր նաեւ Սուրիոյ վարչապետ Զուսէյն Արնուսը:

-Չորեքշաբթի, 27 Յուլիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակին եւ զինեալ ուժերուն հրամանատարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մեջ շեշտեց, որ սուրիական բանակը պատրաստ է թրջական ուժերուն կողմէ սուրիական հողերուն վրայ որեւէ յարձակումի դէմ դնելու:



Հրամանատարութիւնը աւելցուց. «Նախորդ երկու օրերուն, սուրիական հողերուն վրայ թրջական ուժերուն յարձակումներու սաստկացումին լոյսին տակ, սուրիական բանակը պատրաստակամութիւն կը յայտնէ յառաջիկայ ժամերուն կամ օրերուն ընթացքին թրջական ուժերուն կամ անոնց ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն կողմէ որեւէ յարձակումի բռն կերպով հակադարձելու»:

- Երեքշաբթի, 26 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ Սուրիոյ մեջ կապիկի ծաղիկի ժահրով վարակուած պարագաներ չկան: Նախարարութիւնը յայտնեց, որ Կապիկի ծաղիկի ժահրին տարածումը անելի տկար է համեմատաբար պսակածե ժահրին, ջրծաղիկին եւ այլ վարակիչ ժահրերու հետ:



Նախարարութիւնը կոչ ուղղեց այս առնչութեամբ անհիմն լուրեր չտարածել եւ ստոյգ լուրերը ստանալ նախարարութեան պաշտօնական կայքէջէն:

- Երկուշաբթի, 25 Յուլիս 2022-ին, Սուրիոյ կրթութեան նախարար դոկտ. Տարեմ Թապաա յայտարարեց, որ 2022-2023 ուսումնական տարեշրջանը սկիզբ պիտի առնէ 4 Սեպտեմբեր 2022-ին, իսկ ուսուցչական կազմին եւ վարչական պաշտօնեաներուն աշխատանքը պիտի սկսի 28 Օգոստոս 2022-ին:



Նախարարը աւելցուց, որ 2022-2023 ուսումնական տարեշրջանը պիտի աւարտի 25 Մայիս 2023-ին:

- Կիրակի, 24 Յուլիս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ պայթուցիկ նիւթերով պատուած ինքնաթիռ մը արձակեցին դէպի Համայի հիւսիսային Սքելպիէ քաղաքին ուղղութեամբ, ուր տեղի կ'ունենար եկեղեցական արարողութիւն մը՝ «Այա Սոֆիա» եկեղեցւոյ բացումին առիթով:



Սքելպիէի մեջ ՍԱՆԱ-ի թղթակիցը աւելցուց, որ ահաբեկչական այս յարձակումին հետեւանքով արձակագրուեցան մեկ գոհ, 12 վիրաւոր եւ նիւթական բազմաթիւ վնասներ:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ԽՕՍԸԸ

ԼԻԶՊՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆ 39-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ (Արտասանուած՝ Բիւրոյի անդամ Խաժակ Մկրտիչեանի կողմէ)

39 տարի ամաչ հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի հինգ նուիրեալներ արշաւեցին Լիզպոն ու իմացեալ մահը ընտրելով բըրնեցին յաւերժի ու անմահութեան ճամբան: Անոնք որոշած էին քանդել հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն շուրջ քաշուած միջազգային լռութեան պատը եւ իրենց գրկած ռուբոյով գոռալ անբարոյ քաղաքական աշխարհի երեսին:



Լիզպոնի գործողութիւնը մէկ օղակն էր 19-րդ դարուն սկիզբ ամած ազգային ազատագրական պայքարին, Վիտոշի բազէի՝ Զրիստափորի, Պանք Օթոմանի հերոսներու ու միւս նուիրեալներու օրինակներուն հետեւող խիզախ քայլ:

Գործողութենէն ամաչ իրենց արտասանած խօսքերը կը վկայեն այն մասին, որ իրենք հետեւորդներն են ազգային ազատագրական պայքարի տարբեր փուլերուն պայքարած հերոսներուն:

Քաղաքականացումով ու յեղափոխականացումով սկիզբ ամած ու ցեղասպանութեան արդարութեան մարտիկներուն ապա Հայ Յեղափոխական բանակի նուիրեալ հայ երիտասարդութեան ուժական պայքարի պսակադրումն էր Լիզպոնի ողջակիզ ումը: Արայի, Սեդրակի, Սիմոնի, Վաչէի ու Սագոյի զոհաբերումը ազատութեան բազինին՝ յեղափոխականանալու կոչ էր նաեւ հայ երիտասարդութեան:

Դատապարտելով հայ երիտասարդի կրաւորականութիւնն ու քաղքեկութիւնը, անոնք կոչ կ'ուղղէին անհաշտ պայքարի, յանուն հայ ժողովուրդի ազատ պետականութեան: Լիզպոնի ողջակիզ ման կոչն ու կտակը իր արծաթանգը գտաւ նաեւ Արցախի գոյապայքարին նուիրուած հայ ազատամարտիկին մօտ: Կարօտ Մկրտիչեանն ու իր զինակիցները Արցախի լեռներուն ու ձորերուն մէջ կը հնչեցնէին Լիզպոնի անմահացած նահատակներուն նուիրուած երգը, այդպիսով կը հաստատէին, որ հայ ազգային ազատագրական պայքարը յարատեւ կռիւ է յանուն ազգի ու հայրենիքի:

Լիզպոնի հերոսներուն կտակը նոյնքան ու անելի այժմեական է նաեւ այսօր, երբ ազգն ու հայրենիքը վտանգի մէջ են, Լիզպոնի հինգ հերոսները արթուն, խիզախ ու մարտունակ ըլլալու նոյն կոչը կ'ուղղեն հայ երիտասարդութեան: Հայրենիք չտեսած, բայց հայրենիքով ու հայրենիքին համար ապրած ու պայքարած Լիզպոնի ողջակիզ ման հերոսներու կտակն էր հայ երիտասարդութեան՝ թօթափել անտարբերութիւնը, կրաւորականութիւնն ու քաղքեկութիւնը եւ նուիրուիլ ազգին ու հայրենիքին տեր կանգնելու նուիրական պայքարին:

ՀՀԴ Բիւրո
27 Յուլիս 2022

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԺԱՆԹԻՆ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԻ ԴԵՎԱՎԱՐ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ՀԱՆԴՊԱԾ Ե ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ ՇԵՏ

26 Յուլիսին, Հայաստանի մէջ Արժանթինի արտակարգ եւ լիազօր դեսպան Մարիանօ Վերկարան եւ իր խումբը դեսպանատան մէջ հիւրընկալած են Արժանթինի եւ Հայաստանի միջեւ խորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ Իշխան Սաղաթէլեանը: Պատգամաւորը իր շնորհաւորանքները յայտնած է Արժանթինի Անկախութեան տօնին առիթով, ինչպէս նաեւ վերահաստատած միջխորհրդարանական կապերու աշխուժացման համար նոր օրակարգ մշակելու պատրաստակամութիւնը:




Չրուցակիցները կարելոր համարած են Արժանթինի մէջ հայկական Սփիւռքի նշանակալի դերը՝ վերահաստատելով երկկողմ գործակցութեան աշխուժացման համար Սփիւռքի մեծ ներուժի օգտագործման կարելորութիւնը: Կողմերը նաեւ քննարկած են երկու երկիրներու մէջ առկայ հարցերն ու տարածաշրջանային ու միջազգային քաղաքական գործընթացները: Սաղաթէլեան իր դիրքորոշումը ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մարտահրաւերներուն եւ լուծման մասին:

Դեսպան Վերկարան, իր կարգին, ներկայացուցած է Մալվինեան կղզիներու նկատմամբ Արժանթինի ինքնիշխան պահանջներու մասին երկրի հիմնական մօտեցումները: Դեսպան Վերկարան Իշխան Սաղաթէլեանը հրաւիրած է միանալու Մալվինեան կղզիներու հարցով համերաշխութեան ազգային խումբին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՒՈՐ ԲԱՐՏՈՂԱՐԻՆ ՇԵՏ ՀԱՆԴՊՈՒՄԻՆ ԱՐԺԱՐԾԱԾ Ե ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱՂԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ

«Արմէնփրես» կը հաղորդէ, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան 27 Յուլիսին ընդունած է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Ապտուլլա Շահետը եւ անոր գլխաւորած պատուիրակութիւնը:



Ողջունելով հիւրերը, նախագահ Խաչատուրեան բարձր գնահատած է Ապտուլլա Շահետի արդիւնաւետ ամաչնորդութիւնը ՄԱԿ-ի 76-րդ նըստաշրջանին ընթացքին:

Նախագահ Վահագն Խաչատուրեան եւ Ապտուլլա Շահետ անդրադարձած են տարածաշրջանի անվտանգութեան ու կայունութեան անշուղ հարցերուն: Նախագահը արծարծած է մինչ օրս Ատրպէյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներուն եւ պահուող անձանց անյապաղ հայրենադարձութեան ամենուր հարցեր: ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարը ողջունած է խաղաղութեան հաստատման ուղղուած Հայաստանի ջանքերը, յայտնած, որ երկարատեւ ու կայուն խաղաղութեան հաստատումը լայն կարելիութիւններ կը ստեղծէ տարածաշրջանի բոլոր երկիրներուն համար:

ԱՄՆ ԿԸ ՓԱՓԱՔԻ ՕԳՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ՝ ԵՐԿԱՐԱԾԱՄԿԵՏ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՄՆ պետական բաժնի խօսնակ Նետ Պրայս ճեպագրոյցի մը ընթացքին յայտնած է, որ ԱՄՆ պետական քարտուղարը, ինչպէս նաեւ ամերիկացի այլ բարձրաստիճան պաշտօնեաներ բոլոր մակարդակներու վրայ կը շարունակեն աշխատանքը Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ, շարունակելով ամաչարկել ամերիկեան կողմին աջակցութիւնը՝ յանուն երկարաժամկետ ու համապարփակ խաղաղութեան:



Լրագրողը անոր յիշեցուցած է, որ պետական քարտուղար Պիլնքըն օրերս հեռաձայնային գրոյցներ ունեցած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին հետ՝ վերահաստատելով կողմերու միջեւ առկայ գործընթացին աջակցելու պատրաստակամութիւնը: Ան հարց տուած է, թէ արդե՞ք ատիկա կը նշանակէ, որ ԱՄՆ պետական քարտուղարութեան կողմէն կատարուած նախկին նման ամաչարկները մերժուած էին, որուն ի պատասխան Պրայս պատասխանած է. «Ո՛չ, այդպէս չէ: Ատիկա կը նշանակէ, որ մենք կը շարունակենք աշխատանքը, եւ մեր հայ ու ատրպէյճանցի գործընկերներուն հետ շարունակական շփումներու ու դիւանագիտական բանակցութիւններու միջոցով, կը կարծենք, որ կրնանք շարունակել այս ընթացքը: Պետական քարտուղարը տարբեր հեռաձայնային գրոյցներ ունեցած է Հայաստանի ու Ատրպէյճանի դեկավարութիւններուն հետ, սակայն այս կառոյցին մէջ կան մեծ թիւով մարդիկ՝ բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք իրենց գործընկերներուն հետ տարբեր մակարդակներու վրայ շփումներու մէջ եղած են՝ շարունակելու գործընթացն ու վերահաստատելու մեր օգնութեան ամաչարկը, որովհետեւ մենք կը փափաքենք երկարաժամկետ, համապարփակ խաղաղութիւն»:

Լրագրողի այն դիտարկումին, որ պետական բաժինը իր յայտարարութիւններուն մէջ շարունակաբար կը յիշատակէ հարցի կարգաւորման գործընթացին մէջ միջնորդ մարմինին՝ Միւսքի խումբի համանախագահութեան ձեւաչափը, մինչդեռ Ատրպէյճանի նախագահը ամէն օր կը վատաբանէ գայն, Պրայս պատասխանած է. «Մենք մեր յայտարարութիւններուն մէջ յստակօրէն ըսած ենք, որ ԱՄՆ պատրաստ է աջակցելու այս երկու երկիրներուն ու համախոհ գործընկերներուն որեւէ տարբերակով կամ ձեւաչափով, որ արդիւնաւետ պիտի ըլլայ: Մենք 1994 թուականէն Միւսքի խումբի համանախագահ ենք, բայց ինչպէս արդէն ցոյց տուած ենք, մենք նաեւ կը փափաքենք նշեալ երկիրներուն հետ երկկողմ ձեւաչափով աշխատիլ՝ օգնելու Հայաստանին ու Ատրպէյճանին, որպէսզի անոնք գտնեն երկարաժամկետ ու համապարփակ խաղաղութիւն»:

ԽԱՆՍՈՐԷՆ ԼԻԶՊՈՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՆԴՈՒԳՆ ՈՐՈՆՈՒՄ

1896-ին քրտական Մազրիկ ցեղախումբը, Սուլթան Ապտիլ Չամիտի հրամանով, կոտորածի կ'ենթարկե Վանեն Պարսկաստան անցնող հայ մարտիկները: Անելի քան 300 հայ երիտասարդներ եւ անգլեն տղաք գոհ կ'երթան Մազրիկ ցեղախումբի հայատեացութեան:

Վանեն Պարսկաստան անցնող հայ մարտիկներու խումբը կը գլխաւորեր դաշնակցական Պետոն, արմենական Աւետիսեանը եւ հնչակեան Մարտիկը: 1897-ի տարեկազմին թիֆլիսի մէջ տեղի ունեցած ՅՅԴ Ռայոնական ժողովը կ'որոշէ մեծախումբ արշաւախումբով պատժել Մազրիկ ցեղախումբը, լուծել վրէժը Աւետիսեանի, Պետոյի եւ Մարտիկի, անպատժելիութեան մօտեցումները դադարեցնել եւ հայ ժողովուրդին մօտ ամրապնդել յեղափոխական գործին նկատմամբ վստահութիւնը:



Վարդան եւ Իշխան Արղուսեան կը նշանակուին արշաւախումբի հրամանատար եւ օգնական հրամանատար: Յարիւրապետներ կը նշանակուին Փոխիկ եւ Ախպեր: Իսկ Նիկոլ Դուման, որ ներկայացուցած էր արշաւանքին գաղափարը՝ կը նշանակուի արշաւախումբի չորս յինսապետներէն մէկը: Սեւքարեցի Սազոյին կը վստահուի ձիաւոր խումբի պատասխանատուութիւնը:

24-էն 25 Յուլիս 1897-ին լուսնոգ գիշերուան կանուխ ժամերուն, թուրք-պարսկական սահմանը կը հատեն 253 դաշնակցական մարտիկներ, որոնցմէ 40-ը՝ ձիաւոր: Արշաւախումբը կը սկսի Սալմաստէն, կը կտրէ Արաուզ Լեռան լանջը եւ կ'ուղղուի Վանայ Լիճին հարաւ-արեւելքը գտնուող Խանասորի դաշտ, որ ամառնային հաւաքավայրն էր քիւրտ Մազրիկ ցեղախումբին, որուն աշիրթապետն էր Շարաֆ պէյը:

Քանի մը ժամուան ընթացքին կը գործադրուի ծրագիրը: Յայ յեղափոխականները ձեռք չեն երկարեր կանանց եւ մանուկներու: Ֆետայիներու այդ վեհանձն մօտեցումէն կ'օգտուի Նոյնիկըն Շարաֆ պէյ, որ կանացի հագուստ հագած կը ճողոպրի: Կը սպանուի անոր անձնական հիւրը հանդիսացող թուրք հարիւրապետը: Գործողութիւնը ամբողջովին կը ծառայէ ճշդուած նպատակին եւ կ'արձանագրուի յաղթանակ: Գործողութեան ընթացքին կը նահատակուին 25 ֆետայիներ, որոնք շարքին էր ՅՅԴ հիմնադիր Ռոստոմի եղբայրը՝ Կարօն:

Ինչո՞ւ Խանասորը: Խանասորը արդարութեան հաստատման համար դաշնակցական միտքին ծնունդ տուած վրիժառու քայլն էր: Այդ օրերուն այլ ելք չկար արդարութիւն հաստատելու համար: Վայրագ ցեղերը միայն զինեալ պայքարով կարելի էր պատժել: Վրիժառութիւնը նպատակ չէր, այլ միջոց՝ կասեցնելու անարդարութիւնը, հաստատելու հայ ազգին իր հայրենիքին մէջ խաղաղ ապրելու իրաւունքը: Այս միջոցին կիրարկուեց կապիտալ խիզախութիւն, իսկ խիզախութիւնը, ազգի բարօր կեանքին համար կռուելու, պայքարելու կամքը կը տոգորուէր Դաշնակցութեան բացած ազատագրական պայքարի ճամբուն վրայ:

Այդ ճամբան արիւնալի եղաւ, սակայն բերաւ, հասցուց անկախ հայրենիք ունենալու արժանապատիւ յաղթանակին:

Տասնեակ տարիներ ետք, այս անգամ Յեղասպանութեան հետեւանքով իրենց հայրենիքէն գրկուած եւ օտար ափերու վրայ ապրելու դատապարտուած դաշնակցական վրիժառուներ կրկին կ'որոնէին արդարութիւն հաստատելու, այլ պարտադրելու ուղին: Ո՛չ քաղաքականութեամբ, ո՛չ բարի յարաբերութիւններով, ոչ ալ կորուստը համոզում դարձնելու պարտուողական հոգեբանութեամբ կարելի էր Յայ Դատի առաջամարտիկը դառնալ ու միջազգային հանրութեան ուշադրութիւնը հրաւիրել պահանջատիրութեան արդար երթին: Անելին. հարկ էր յիշեցնել ցեղասպանին, որ դաշնակցական երիտասարդութիւնը իր պատմական իրաւունքներու խլումն ու իր ազգին նկատմամբ ի գործ դրուած ոճիրը մոռացութեան չէ մատնած, չի կրնար մատնել մինչեւ արդար հատուցում:

Ու տեղի ունեցաւ Լիզպոնի մէջ դաշնակցական երիտասարդութեան, Դրոյի ժառանգորդներուն աքտը:

27 Յուլիս 1983-ին՝ Սեղօն, Սիմոնը, Սազօն, Արան եւ Վաչէն Նուիրուեցան ազատագրութեան ու Յայ Դատի ի խնդիր մղուող արդար պայքարին:

Արդարեւ, ժամը 11:30-ին, Փորթուկալի մայրաքաղաք Լիզպոնի մէջ, թրքական դեսպանատունն ու անոր կից գտնուող թուրք դեսպանին բնակարանը թատերաբեմ դարձան անձնասպանական գործողութեան մը, որ կատարուեցաւ «Դաշնակցական Յեղափոխական Բանակ»-ին կողմէ եւ վերջ գտաւ գործողութիւնը կատարող վերոյիշեալ հնգեակին անձնասպանութեամբ, երբ անոր անդամները ռումբերով եւ ուժանակով պայթեցուցին եւ կրակի տուին դեսպանին բնակարանին մէկ յարկը, գոր գրաւած էին:

Անոնք միջազգային հանրութեան յղեցին հետեւեալ կողմը.

«Բրտութեան դիմելու մեր որոշումը արդիւնք է թրքական պետութեան եւ անոր գորակից կանգնող ուժերու կողմէ հայ ժողովուրդի արդար եւ խա-

ՀՆԳԱՁԱՅՆ ՊԱՏԱՐԱԳ

(Լիզպոնի Ողակեղներուն 39-րդ Տարեդարձին Առիթով)

Գրիգոր Տունկեան

Նուիրեալ հնգեակ,
Մերժեցիք վայելք ու կեանք,
Դասաք Լիզպոն քաղաք,
Իրաւագրկուած ազգի համար
Մատուցելու սուրբ պատարագ:

Անձնագրի աւտոմատ,
Խոյանքով ձեր տուիք ահագանք:
Իրաւունքի ձայնը հնչեց
Չերթ ուժանակ,
Պայթուցիկը՝ հայ ցասումն էր խտացած:

Գինգ առիծներ դաշնակցական
Խլացուցիք աշխարհն համայն:
Քանդեցիք ամբողջը լուրջեան,
Խորհրդանիշն էք խիզախութեան,
Ներշնչարան՝
Մերունդներուն հայութեան:



դաղ պահանջները քննելու մերժումին:

«Արհամարհանքն ու սինիզմը, գորս թուրքիան եւ միջազգային հասարակութիւնը կը ցուցաբերեն արդարութեան եւ միջազգային օրէնքներուն հանդէպ, մեզ անելի եւս համոզեցին, որ մեր արդար դատի հետապնդման համար մնացած միակ միջոցը զինեալ պայքարն է:

«Տասնամեակներ շարունակ հայերը սպասեցին, որ միջազգային արդարութիւնը լուծէ Դաշնակցական Դարցը: Դայերը քայլարշաւներ կազմակերպեցին, ցոյցեր ըրին եւ յուշագիրներ հասցեագրեցին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ մեծ ուժերուն: Բայց ո՛չ մէկ արդիւնք: Շօշափելի ո՛չ մէկ արդիւնք՝ հայ ժողովուրդի քաղաքական եւ հողային իրաւունքներու ճանաչման ի խնդիր: Մեր դատին շուրջ բարձրացուած լուրջեան պատը անխորտակելի ըլլալու չափ հաստ էր:

«Այժմ, Դաշնակցական Դարցը անտարբերութեամբ դիտելու եւ զայն խաղաղ միջոցներով լուծելու մերժումին պատճառով, որոշած ենք ստիպել թուրքիան, որ ընդունի հայ ժողովուրդին հետ բանակցիլ՝ Դաշնակցական Դարցը լուծելու համար:

«Թող թրքական պետութիւնը եւ իր դաշնակիցները մերժեն ընդունիլ Յեղասպանութեան եւ հայկական իրաւունքներու իրականութիւնը:

«Թող միջազգային հանրային կարծիքը մեզ անուանէ արկածախնդիրներ, ոճրագործներ կամ ահաբեկիչներ:

«Այդ բոլորը ո՛չ մէկ նշանակութիւն ունին մեզի համար:

«Մենք գիտենք, թէ՛ ինչ կ'ընենք: Գիտենք նաեւ, թէ ի՞նչ պետք է ընել ապազային:

«Ազատատենչ եւ յեղափոխական հայ երիտասարդութիւնը որոշած է Նոյնիսկ ակնթարթ մը դադար չտալ թշնամիին:

«Մեր ժողովուրդի ինքնորոշումը ապահովող միակ միջոցը զինեալ պայքարն է: Կորսնցուցած ենք ամեն ինչ, Նոյնիսկ մեր ինքնութիւնը, սակայն, բարեբախտաբար, տակաւին կը պահենք մեր յեղափոխականութիւնը:

«Մենք որոշեցինք այս շենքը օդը հանել եւ մնալ փլատակներուն տակ:

«Անձնասպանութիւնն չէ այս, ոչ ալ խելագարութիւն, այլ՝ մեր գոհորդութիւնը ազատութեան բազմիկին:

«Կեցցե՛՛ ազատատենչ հայ ժողովուրդը:
«Կեցցե՛՛ Դաշնակցական Յեղափոխութիւնը»:

Անոնք ինքնահրկիզումը եւս արդարութեան հաստատման համար մղուած պայքարի ծիրին մէջ պետք է դիտել: Արդարութիւն, որ որքան ալ քողարկուի, ձգձգուի, բարիդրացիական յարաբերութիւններու շղարշին տակ ծածկուի, պիտի մնայ լուսաւոր արեւի նման կիզող, մինչեւ որ կեանքի վերածուի, հաստատուի երկար, բայց անսահանջ պայքարի աւարտին:

Քաղաքականութեան մէջ նաւարկումները, գիշում պարտադրող կացութիւնները կրնան երեւութապէս փակ համարուած սեպել պայքարի այս էջը, սակայն պայքարողներու փաղանգները պիտի շարունակեն որոնել ամեն միջոց ու հնարք, մինչեւ արդարութեան հաստատումը:

Չարմինէ

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԵՒՅՅ ՅԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԸ ԱՅՅԵԼԱԾ Է ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ

Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին շրջագիծին մէջ, Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչ Սերտար Բըլըճ իր աշխատանքային խումբին ուղեկցութեամբ 24 Յուլիսին այցելած է Կարս:



Ան Կարսի Աքթաքայ շրջանին մէջ այցելած է հայ-թրքական սահմանի Տողուքափը կոչուող անցակէտը, ապա շրջայց կատարած՝ Անիի ակերակներուն մէջ:

Տեղական GazeteKars լրատուամիջոցի տեղեկութեան համաձայն, Բըլըճ Կարսի մէջ ունեցած է շարք մը հանդիպումներ, որոնք, սակայն, տեղի ունեցած են մամուլի համար փակ դրութեամբ:

ԷՐՏՈՂԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԱՅՏԵԼԱԾ Է ՓԱՇԻՆԵԱՆԻ ՀԵՏ ՈՒՆԵՅԱԾ ՀԵՌԱՉԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՅԻՆ ՄԱՍԻՆ

Թուրքիոյ նախագահ Էրտողան թրքական պետական «TRT» ցանցին մէջ ներառնուած լրատուամիջոցներուն հարցազրոյց տուած է, որուն ընթացքին անդրադարձած է նաեւ հայ-թրքական յարաբերութիւններուն եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ իր ունեցած հեռաձայնային զրոյցին:



«Վարչապետ Փաշինեանի հետ երկու երկիրներու կրօնական տօներուն առիթով հեռաձայնային զրոյց ունեցանք, որուն ընթացքին շնորհաւորանք փոխանակեցինք: Անշուշտ խօսեցանք նաեւ մեր երկրին եւ Հայաստանի միջեւ կարգաւորման շարունակուող գործընթացին մասին», ըսած է Էրտողան: Ան ընդգծած է, որ Ատրպէյճան ի սկզբանէ Թուրքիոյ համար եղած է կարմիր գիծ եւ Ատրպէյճանի հարցերը լուծելէն վերջ միայն Անգարա սահմանները պիտի բանայ:

«Գոհունակութեամբ ընդունեցի, երբ լսեցի, որ վարչապետ Փաշինեան տարածաշրջանային խաղաղութեան եւ գործակցութեան համար կը բաժնէ մեր մտքերը: Բայց արդէն կ'ակնկալենք, որ խօսքէն անդին որոշակի քայլեր առնուին», ըսած է ան:

Անոր համաձայն, Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ Թուրքիա վճռական է, կը հետապնդէ ամբողջական կարգաւորման եւ բարիդրացիական յարաբերութիւններու հաստատման իրականացումը: Էրտողան յիշեցուցած է Թուրքիոյ մէջ ապրող, ըստ անոր, ակնկալուող 100 հազար հայերը: «Ներկայ պահուն Թուրքիոյ մէջ կան ակնկալուող 100 հազար հայեր, որոնց մէջ կան ե՛ւ Թուրքիոյ քաղաքացիներ, ե՛ւ ոչ-քաղաքացիներ, որոնք կրնան քաղաքացիութիւն ստանալ ապագային: Ասիկա ցոյց կու տայ մեր մօտեցումը», ըսած է ան:

Աւարտին Թուրքիոյ նախագահը դարձեալ յիշեցուցած է, որ Անգարա իր գործողութիւնները կը համակարգէ Պաքուի հետ:

ԱԳ. ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԿՐ ՀԱՄԱՑԵՂԷ ՕԳՏԱԿԱՐՆ ՈՒ ՀԱՏԵԼԻՆ

Ագգային իշխանութեան հովանաւորութեան ներքոյ եւ Ագգ. Միացեալ Նախակրթարանի տնօրէնութեան եւ հոգաբարձութեան նախաձեռնութեամբ, երկրորդ տարին ըլլալով անընդմէջ, սկիզբ առաւ Ագգ. Միացեալ վարժարանի աշակերտութեան ամառնային ծրագիրը՝ Նախատեսուած 3-էն 6-րդ կարգերու աշակերտութեան համար:

Ծրագիրը, որ սկսաւ 12 Յունիսին, հիմնականօրէն կ'ընդգրկէր 6 նիւթ՝ անգլերէն, ֆրանսերէն, մտային հաշիւներ, համակարգիչի օգտագործման արուեստ, ծրագրաւորում, մեքենաշինութիւն (robotics): Ասոնց կողքին աշակերտները ունին նաեւ հայկական պարի, գծագրութեան, ճատրակի եւ մարզանքի պահեր:



Վարժարանի տնօրէն Զեփիւռ Րէիսեան պարզաբանելով ծրագրի հիմնական նպատակը ըսաւ, որ այս ծրագիրը արդէն երկրորդ տարին է, որ կ'իրականացուի. նպատակը օգտագործելն է ամառնային երկար արձակուրդը, աշակերտին գիտելիքներն ու կարողութիւնները գարգացնելու համար: Ուստի, մեկնելով ներկայ ժամանակի հրամայականէն, վերոնշեալ գիտելիքներու մէջ հիմնական կարեւորութեան, օգտագործելով դասաւանդող նիւթերուն համար գոյութիւն ունեցող յարմարութիւնները, ծրագիրը ընթացք առած է ու արդէն կը հասնի իր աւարտին: Տնօրէնութիւնը ամբողջովին դպրոցը երեք ամիս փակ պահելու փոխարէն, որոշած է նման օգտակար աշխատանքի համար գայն տրամադրել աշակերտութեան:

Դասաւանդութիւնը շաբաթական չորս օր է: Հիմնական դասանիւթերը կ'աւանդուին շաբաթը երկու անգամ, իսկ մնացեալը՝ մէկ: Դասաւանդու-



թեմէն դուրս աշակերտները երբեմն կ'ունենան պտոյտներ եւ խաղի օրեր: Ծրագիրը պիտի երկարի մինչեւ 12 Օգոստոս:


Աշակերտները կը ծանօթանան համակարգչային ծրագիրներուն, անոնց գործելաոճին, կը սորվին պատրաստել համակարգչային ծրագիրներ, տեսախաղեր, շինել մարդամեքենաներ՝ ռոպոթներ, հայերէնին կողքին գարգացնել իրենց անգլերէնի եւ ֆրանսերէնի իմացութիւնը եւ անսխալ արտայայտուելու միջոցները:

Քսանմէկերորդ դարուն, լեզուներու իմացութիւնը, համակարգիչի օգտագործման տիրապետումն ու գարգացած միտք ունենալը կարեւոր կը համարուին: Ուստի աշակերտներուն ազատ ժամերը օգտագործելով, Ագգ. Միացեալ վարժարանը կը ջանայ գիրքնք նման հմտութիւններ ձեռք բերելու սկզբնական գիտելիքներուն եւ գործնական միջոցներուն ծանօթացնել:

Վեհան Պարսումեան

Պրիսմակետ

ԱՆՈՒՆ ԵՒ ՅԱՄԲՈՅՐ



Մարուշ Երամեան

Անուններն ալ մարդոց պէս անհատականութիւն ունին ու երբեմն դժուար կ'ըլլայ ընկերութեան մէջ անոնց մուտքը:

Բայց անուն մը կրնա՞յ այսքան «տառապանք» պատճառել:

-Անունդ ի՞նչ է:

-Մարուշ:

-Երբեք, ատ ի՞նչ անուն է:

Չէր բաւեր որ ամէն հարցնող անպայման պիտի ըսեր՝ «Ի՞նչ» ու անունս կրկնելէ ետք, ըսեր՝ «Յը», կամ «Մարի», Մարո, Մարիա», կամ «Ատ ի՞նչ ռուսական անուն է, ինչո՞ւ քեզի ռուսական անուն դրեր են, հայկական անուն չկա՞ր»...

այսքանը չէր բաւեր, հիմա ալ աս «երբեք»-ը: Այս բառը ծանօթ չէր ինծի, բայց աղջկան արտայայտութիւնը յետոյ տակ էր՝ պարզապէս կը գաւեր անունէս:



Սերոբեան աւագան էի, երբ ինծի տարեկից եւ անծանօթ աղջիկ մը մօտեցաւ, եւ, գիտէք արդէն, անունս հարցուց: Որքան ալ սակայն գանելիք անուն ունենայի, ատիկա արգելք չեղաւ որ այդ օրը միասին անցընենք, շուրին մէջ թէ շուրեն դուրս խաղալով:

Բայց դէմքին արտայայտութիւնը երբեք չմոռցայ: Կ'երեւի այդ էր պատճառը, որ կրցածիս չափ կը խուսափէի անունս ըսելէ, նախընտրելով անանուն մնալ:

Անունս մայրս ընտրեր է:

Եօթը տարի անգամ մնալէ ետք, մայրապետ մօրաքրոջս՝ քոյր Մելանիին, ընկերուհին եւ այդչորջանի Անարատ Յղութեան Միաբանութեան մեծաւորը՝ Մայր Պէնիսիան, Լուրտ (Ֆրանսա) երթալով ուխտեր է, որ «Եթէ Արուսը գաւակ մը ունենայ, տղայ թէ աղջիկ, Մարի պիտի կոչէ»:

-Եթէ տղայ ըլլայի, ինչպէ՞ս Մարի պիտի ըլլար անունս, - հարցուցեր էի մօրս առաջին անգամ այս պատմութիւնը լսելու:

-Կ'ըլլար Ժան-Մարի, Փիեռ-Մարի, Մարիուս, Մարիօ, կամ նման բան մը:

Շատ համոզիչ չէր թելէ, բայց քանի տղայ չէի, չէի շարունակած հարցուփորձս:

Նոյն շրջանին ՆԷՄԷՅայկանոյշը կը լսէ մօրս յղութիւնը եւ կը խնդրէ:

-Եթէ աղջիկ մը ունենաս, անունս կը դնե՞ս:

-Ունենամ, դնեմ, - կ'ըսէ մայրս եւ կ'որոշէ զիս Մարի Յայկանոյշ-ի փոխարէն Մարուշ կոչել:

Չապելի հօրքուրս, երբ կը լսէ որ իր մօրն ու քրոջ անունները դրուեր են իրենց մեծ եղբոր նորածինին, կը սկսի բողբոջել՝ «Յայայ ի՞մ անունս...»: Բայց մօրս որոշումը որոշում է: Եւ անունս կ'արձանագրուի ճիշդ այդպէս՝ Մարուշ:

Երբ սկսայ ծնողքիս գրադարանին գիրքերը մեկիկ-մեկիկ կարդալ, կարգը հասաւ Յամաստեղին. միայն «Գիւղը եւ Անձրեւը» ունէինք, երկուքը միասին կազմուած «Արեւելքի» թերթօնէն:

Յասայ «Յամբոյրը» պատմութեան այս հատուածին.

«-Էր կողմէն մեր Մարուշին բաղդը լաւ է, - խօսեցաւ Նուհիկ»:

Յաւանաբար վրիպակ է, պետք է Մարալ ըլլայ, մտածեցի եւ կրկին ու կրկին կարդացի տողը, շարունակեցի պատմութեանը, բայց կրկին եւ կրկին Մարուշ էր կարդացածս, Մարալ չէր, սխալ չէի տեսած:

Այդ օրէն սիրտս քիչիկ մը հանգստացեր էր:

Տարիներ ետք «Բագին»-ի խմբագրատան մէջ հանդիպեցայ Յակոբ Իսկէնտերեանին, որուն կատարի ընթերցող մը ըլլալն ու մեծ գրադարան ունենալը լսեի էի: Մարդը այդ օրերուն նոր երեւցող գրութիւններս ալ կարդացեր էր եւ նորելուկ մը քաջալերելու ազնուութեամբ գնահատեց զիրս: Յետոյ, ամենայն լրջութեամբ հարցուց.

-Մարուշը քու ծածկանո՞ւնդ է:

-Ո՛չ, անունս է:

-Բայց ի՞նչ անուն է, - ըսաւ զգուշութեամբ:

Եւ ճիշդ այդ պահուն Յամաստեղն ու իր «Յամբոյրը» ինծի օգնութեան հասան:

-Յաւանաբար կարդացեր էք Յամաստեղի «Յամբոյրը», որուն հերոսուհին Մարուշ կը կոչուի:

Ափը ճակտին գարկաւ.

-Ինչպէ՞ս մոռցեր էի:

Անունս կամաց-կամաց ինքզինք կը հաստատեր:

Յետոյ երբ առիթը ունեցայ Աճառեանի «Անձնանունների Բառա-

Շար.՝ էջ 9

ՇԱՀԻՐ ՇԱՐՈՒՆԱԿ



Խորեն Քիւյ. Պերթիպէան

Շահիր մարդոց աղօթքը ինկելի, որպէսզի վայելես օրհնութիւններ ցանկալի:

Շահիր գիրքերուն մտերմութիւնը հաճելի, որոնք հարստացնող գանձեր են մտքի:

Շահիր փորձառութիւն բազմակողմանի, այն ատեն գիտութեան շտեմարանը կ'ընդարձակուի:

Շահիր ընկեր առաքինի, ան կը դառնայ սրտակից բարեկամ եզակի:

Շահիր խաչի ճանապարհէն դասեր անմոռանալի, որոնք կ'արժեւորեն երթոյ անասանելի:

Շահիր սրտբաց գոջումէդ համարձակութիւնը դարձի, այն ատեն պիտի մերժես մեղքը ամօթալի:

Շահիր Տիրոջ հաճութիւնը սքանչելի, որպէսզի կոչուիս լոյսի եւ ցերեկի որդի:

Շահիր երեսայութեան անմեղութիւնը կարօտալի, որպէս խաղաղութեան ոսկի բանալի:

Շահիր երիտասարդութեան եռանդը անսպառելի, պիտի ունենաս ներշնչման աղբիւրը ձգտումի:



Շահիր ծերունագարդ տարեցին խրատը պիտանի, որպէս սկզբունքներ որդեգրելու լուսաշող ուղի:

Շահիր անդիմակ քննադատներ, որոնք ճամբով կեանքիդ ընթացքը պիտի հանդիսանայ անայպանելի:

Շահիր ժամանակը առանց վատնումի, որպէսզի կոչուիս մշակ անմեղարդելի:

Շահիր կորսնցուցած արժէքներդ առանց վարանումի, օրերդ կ'ըլլան պայծառ պատկեր վերականգնումի:

Շահիր դրամ արդար քրտինքովդ ճակտի, վստահաբար պիտի ըլլայ վաստակդ օրհնակելի:

Շահիր սպասումէդ ընդմիշտ տոկալ առանց ձանձրոյթի, ահա այն ատեն նպատակդ կը դառնայ իրագործելի:

Շահիր սիրոյ գանձանակէդ անծանօթներ, առանց ակնկալիքի, պիտի ըլլաս նոր օրերու բարի Սամարացի:

Շահիր ներկադ իր առիթներով ուրախալի, որպէսզի գուարթ հոգիով կերտես ապագան յուսալի:

Շահիր առողջ դիտողութեան ընդմէջէն սրբագրութեան արուեստը գաղտնի, այդպիսով վարք ու բարքդ կ'ըլլայ գովելի:

Շահիր խաչէդ խոնարհութիւնը անյետաձգելի, որպէսզի քու անձովդ երկնաւոր Տէրը փառաւորուի:

Շահիր կայծակ մը ձեռք կանթեղէն Լուսաւորչի, որպէսզի հաւատքի լապտերդ մշտավառ պահուի:

Շահիր մայրենի լեզուէդ բառեր հիւթեղ-հիանալի, որպէսզի հայերէնին աստուածային իւրայատկութիւնը բացայայտուի:

Շահիր այն ինչ որ հոգեշահ է եւ գնահատանքի արժանի, այն ատեն լեցուն պիտի պիտի ցանես առանց տատամսումի:


Շահիր հաշտարար մարդոց բարեխօսութիւնը փափաքելի, որպէսզի սիրոյ կայծը սրտիդ մէջ դարձեալ անմար հուրի վերածուի:

Շահիր Զրիստոսի Յարութեան յոյսը անպարտելի, որ կեանքիդ մէջ յաղթանակի աւետիսը մնայ լսելի:

Երիտասարդական Ուսման

ՏՈՍՍ

«Հ»-ու Յաջող



Կիթառ Արևեսան

Խելացի էր ան: Շուտ ըմբռնող ու ճարպիկ: Ուսուցիչներու օրինակներուն մեջ՝ միշտ ներկայ, սակայն բարձունքէն դիտող, հեզկող եւ արհամարհող էր «ներքեւ»-ի խաւը:

Վարպետ էր ան: Բազմաշնորհ ու բազմատաղանդ: Գանգատն ու դժգոհանքը անպակաս էին իր առօրեայէն, իսկ «ես»-ը՝ միշտ ներկայ:

Ատակ էր ան: Իր սրամտութեամբ եւ հնարամտութեամբ ամէն գործ լիովին կատարող, սակայն անատակ՝ ընկերային կեանք եւ յարաբերութիւն մշակելու:

«Յաջող» էր ան:



ՄԱՐԴԸ ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՒ ԿՈՅՏ ՄԸՆ Է ՆԱԵՒ



Սարին Գրիգորեան

Մեր միտքը յաճախ կը գբաղեցնեն մտահոգութիւններ, պարտաւորութիւններ, երբեմն ալ բանի մը չծառայող մտմտութիւններ:

Յաճախ դժուար կը թուի մեր միտքէն անցածը բառերով արտայայտելը. արդեօք մեր ամէկուտութեան բերումով, թէ մեր հարցերով շրջապատը ձանձրացնելէ զգուշանալու համար...: Ինչո՞ւ արտայայտուելու դժուարութիւն կ'ունենանք յաճախ: Միջավայրի ու դաստիարակութեան հետեւանք է ասիկա:



Ինչո՞ւ մեզ համոզած են, որ երբ տխուր ըլլանք, պէտք է մեզի վերապահենք մեր տխրութիւնը ու այլոց հետ չբաժնեկցինք զայն: Բայց «մարդ մարդով է գեղեցիկ», չէ՞: Ինչո՞ւ մեկուսանալ ուրեմն եւ ինքնամփոփ դառնալ:

«Ինչո՞ւ»-ներու շարքը երկար է...

Ինչո՞ւ երբ ուրախ ըլլանք կը յուշեն, որ մեր ուրախութիւնը ժամանակաւոր է: Չէ՞ որ կեանքը մանր-մանր ուրախութիւններով

կը հարստանայ: Ինչո՞ւ երբ վախնանք, կը սաստեն մեզ ըսելով, որ միայն մանուկներն ու երեխաները կը վախնան: Չէ՞ որ կեանքի իւրաքանչիւր հանգրուան նոր մարտահրաւերներով, հետեւաբար նոր վախերով ու մտահոգութիւններով կը յատկանշուի նաեւ: Ինչո՞ւ երբ դատարկութիւնը պատէ մեր հոգին, կը գարմանան ու կը յորդորեն նոր գբաղում մը գտնել անպայման: Չէ՞ որ դատարկութիւնը հետեւանքն է անցած ծակը օրերուն եւ անոնց հետեւանքով յառաջացած հիասթափութեան:


Անելին. ինչո՞ւ երբ մեկը սիրէ, պէտք չէ արտայայտուի, ընդհակառակն. պահէ ու ճգմէ սիրոյ զգացումները մարդը հրաբուխի մը նման: Չէ՞ որ սիրոյ զգացումը բարին ու լաւը կ'արթնցնէ մարդուն մէջ ու կ'իմաստաւորէ կեանքը: Ինչո՞ւ գոյումը ամօթ կը համարուի: Չէ՞ որ մարդ իր սխալներէն դասեր կը քաղէ ու գոյալէ ետք միայն կրնայ սրբագրել զանոնք:

Մարդկային զգացումները յաճախ կը ներկայացուին որպէս մարդու տկար կէտեր, զորս պէտք է ճգմել, պահել, չարտայայտել: Մինչդէռ իր զգացումները ընդունող, զանոնք բնական համարող ու արտայայտող մարդը ամենէն ուժեղ մարդն է ըստ իմ համեստ փորձառութեան:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

Համագործակցաբար Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհ. Վարիչ Մարմինին հետ, «Գանձասար» այս սինակով պիտի հրատարակէ պատանեկան նոր գրիչներու առաջին փորձերը՝ քաջալերելու անոնց մուտքը հայ մամուլ:

«ԱՆՅՈԳ ԸԼԼԱԼՈՒ ՆՈՒՐԲ ԱՐՈՒԵՍՏԸ»



Նարեկ Ռայֆ Ապանեան

Մեր կեանքը լի է լաւ ու վատ փորձառութիւններով, որոնք անդրադարձ կ'ունենան մեր առօրեային վրայ:

Տարուան մը ընթացքին կրնանք ապրիլ ուրախութիւն եւ տխրութիւն, արդիւնաբեր կամ ապարդիւն օրեր: Օրերը միօրինակ կը ընդոյթով չեն ընթանար:

Տարուան 365 օրերէն ծուլութեամբ յագեցած օրերէս մէկն էր, երբ որոշեցի գրելու փորձ մը կատարել: Անկասկած պիտի հարցնէք, որ եթէ օրս արդիւնաբեր չէ, ինչո՞ւ եւ ի՞նչ կը փորձեմ գրել: Չգարմանաք եթէ յայտնեն, որ մուսան է գիս մողղը՝ կէս գիշերուան ժամը 3:00-ին:



Մեր կեանքին ընթացքին մերթ ընդ մերթ կը յաղթենք, կը պարտուինք, կը նեղուինք, կը սորվինք... եւ զգարմանալի բաներու կը հանդիպինք:

15 տարի վայելելէ ետք այս մուրակին բարիքները ու քմծծաղով նայելէ ետք ընթերցանութեան մուլուցք ունեցող ընկերներու, ես ալ իրենց խումբին մաս կազմեցի ու սկսայ հետաքրքրական գիրքերու ծանօթանալ:

Առաջին գիրքը ընթերցելէս ետք, կ'ուզեմ սորվածս բաժնեկցիլ ձեզի հետ:

Գիրքին խորագիրն է «Անհոգ Ըլլալու Նուրբ Արուեստը»: Կը բաղկանայ 9 մասերէ: Յեղինակն է Մարք Մանսըն:

Ինչ մասերուն հիմնական միտքը դրական մտածումն է... թէ ինչպէ՞ս պէտք է անտեսել մեր շրջապատի բացասական մօտեցումները:

Յեղինակը նախ կ'անդրադառնայ գիրքին կարեւորութեան եւ կը յայտնէ, որ ընթերցողը պիտի կարենայ յստակօրէն խորհիլ իր նպատակներուն եւ գաղափարներուն մասին եւ յանդգնութիւն ունենալ ընտրելու կեանքի իր նախասիրած ճամբան:

Ետքը ան լուսարձակի տակ կ'առնէ մարդուն դժուար ճամբաներ հարթելու կարողութիւնը: Ան կը շեշտէ, որ հարցի մը լուծում գտնելը կրնայ նոր հարցի մը դուռ բանալ: Ուստի կը յորդորէ դժուար ճամբաներ ուղղուելու պարագային ընտրել այնպիսիները, որոնց յաղթահարումը մեզի ուղղուած մարտահրաւեր կը դառնայ եւ կրնայ զարգացնել մեր անհատականութիւնը, դիմանալու մեր կարողութիւնը:

Յեղինակը կ'անդրադառնայ նաեւ դժուարութիւններէ անցնելու կարեւորութեան ու անոնց դրական ազդեցութեան: Ապա կը ներկայացնէ սկզբունքներ եւ կը շեշտէ, որ սկզբունք ունենալը օգտակար է, կ'օգնէ որ հաճելի եւ իմաստալից կեանք մը ապրինք, սակայն սկզբունքային ըլլալու համար նախ պէտք է գիտակից ըլլալ եւ մեր առած որոշումներուն պատասխանատուութիւնը կրել:

Յեղինակին համաձայն, ձախողութիւնն ալ քայլ մը առջեւ կը տանի մեզ, այնպէս ինչպէս ցաւն ու տառապանքը կը տաշեն մեր հոգին:

Գիրքի վերջաբանին մէջ Մարք Մանսըն անդրադառնալով կեանքի նպատակին կը գրէ. «Ամէն մարդ իր կեանքին ընթացքին կ'ուզէ այնպիսի գործ մը կատարել, որ նոյնիսկ իր մահէն ետք մատնահետք թողու այս աշխարհին վրայ: Այս պատճառով ալ, օրինակ, շատ մը նշանաւոր մարդիկ կ'ուզեն արտադրել այնպիսի գործեր, որոնցմով միջավայրի բարեկամ կրնան համարուիլ, հետեւաբար յիշուիլ իբրեւ աշխարհի զարգացումին դրական ներդրում բերող, մեր մուրակին բարեկամ եւ ընկերային մարդիկ»:

«Արամ Մանուկեան» մասնաճիւղ Ե. կարգ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 12

երեք աշակերտներուն, եւ անոնց ճամբով ողջ մարդկութեան:

Մասին եպիսկոպոս յայտնեց, թէ այս տօնը կը կոչուի նաեւ Վարդավառ, որ որպէս մաքրութեան խորհրդանիշ շուր սրկելու գեղեցիկ ասանդութիւնը կը բովանդակէ:

Այլակերպութեան խորհուրդին ընդմէջէն Սրբազան Զայրը ներկաներուն պատուիրեց, որ

ա. Աղօթեն եւ հոգեւոր հաղորդակցութեան մէջ մտնեն Արարիչին հետ:

բ. Տեսնեն Աստուծոյ պարգեւած շնորհքները:

գ. Վկայեն եւ իրենց ունեցած շնորհքները ծառայութեան ճամբով գործնականօրէն թարգմանեն՝ Աստուծոյ փառքին համար:

Սրբազան Զայրը յայտնեց, թէ անցնող շաբաթներուն Թեմի Միաբաններուն եւ ազգայիններուն հետ ներկայ գտնուած է Անթիլիաս՝ Միւռնոսօրինքի արարողութեան, ապա նաեւ Միաբանական ընդհ. Ժողովին, իր հետ բերած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՕՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին ձեռամբ նորօրհնեալ Սրբալոյս Միւռնոսէն բաժին մը եւ այսօր նորօրհնեալ Ս. Միւռնոսով ջրօրհնեց պիտի կատարէ: Մասին եպիսկոպոս Վեհափառ Զայրապետին ողջոյններն ու գնահատանքը փոխանցեց Բերիոյ Զայրը Թեմի Ազգային Վարչութեան, Կրօնական Ժողովին, ազգային մարմիններուն եւ ժողովուրդի գաւազներուն:

Սրբազան Զայրը սրտի անհուն ուրախութեամբ յայտնեց, թէ անցնող շաբաթներուն Վեհափառ Զայրապետին դիմած է՝ Առաջնորդի Օգնական Զոգ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանին եւ Բեսապի Զոգեւոր Տեսուչ Զոգ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիւրիւմեանին վարդապետական լանջախաչ շնորհելու խնդրանքով: Վեհափառ Զայրապետը ընդառաջելով Սրբազան Զոյր փափաքին, օրհնութեան գիրով Զոգ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանին շնորհեց վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք, ինչպէս նաեւ յառաջիկայ շաբաթներուն Բեսապի Զոգեւոր Տեսուչին պիտի շնորհէ:

Սրբազան Զայրը հաւատացեալներու յոտնկայս ներկայութեան ընթացքեց Վեհափառ Զայրապետին սրբատառ կոնդակը եւ լանջախաչ շնորհելու կարգը կատարեց՝ լանջախաչ նուիրելով անոր:

Պատարագէն ետք, Մասին եպիսկոպոս նորօրհնեալ Սրբալոյս Միւռնոսով Ջրօրհնեց կատարեց, աղօթելով Ամենակալին, որ Սրբալոյս Միւռնոսի օրհնութիւնը անպակաս պահէ մեր ընտանիքներուն վրայէն եւ փարատ մեր հիւանդութիւններն ու ցաւերը:

Սրբազան Զայրը «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ եւ թափօր կազմած ուղղութեամբ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր ժողովուրդին բաժնուեցաւ Սրբալոյս Միւռնոսով օրհնութեան շուրջ: Զատարագեալները հաւատքով եւ երկիւղածութեամբ

եամբ մաղթեցին, որ Սրբալոյս Միւռնոսին ընդմէջէն աստուածային երկնառաք օրհնութիւնը անպակաս մայ իրենց ընտանիքներուն եւ գաւազներուն վրայէն:

Աւարտին, «Ն. Աղբալեան» սրահէն ներս, ի պատիւ Զայր Սուրբին տեղի ունեցաւ կարկանդակի հատում եւ հիւրասիրութիւն: Ներկաները իրենց շնորհաւորական բարեմաղթութիւնները փոխանցեցին Զայր Սուրբին:

ԱՆՈՒՆ...

Սկիզբ՝ էջ 7

րանը» ունենալու, առաջին անունը որ նայեցայ, իմ անունս էր: Եւ ո՛վ երջանկութիւն, անունս այդտեղ էր, Մարուճ-ին եւ Մարուֆ-ին միջեւ բազմած, հայկականութեան կիսաթագը գլխուն: Կիսաթագ կ'ըսեմ, որովհետեւ այս բառ-անունը կիսով հայերէն է, թէ «մարի» հայերէնով էգ թռչուն կը նշանակէ, բայց որպէս անուն կու գայ Աստուածածնայ անունէն, որուն արմատը կ'երկարի մինչեւ երբայերէնը եւ որուն բազմաթիւ իմաստներէն մէկն ալ «ցանկացուած երեխայ» է, միւսները ըլլալով «դառն», «սիրելի», «ըմբօստութիւն», «ծովային» եւ «ծովի կաթիլ»:

Կ'ըսուի նաեւ թէ Մարի-ն կամ Մարիամ-ը կու գան եբրայական Միրիամ-էն, որ անունն էր Մովսէսի եւ Ահարոնի մեծ քրոջ, մէկը եբրայեցոց եօթը մարգարէութիւններէն, առաջին անգամ յիշուած Զին Կտակարանի Ելից գիրքին մէջ: Միրիամ, որ կը յիշուի որպէս Մարգարէութի Միրիամ, ինք էր, որ իրեայ կիները եգիպտոսէն դուրս առաջնորդեց, մինչ Մովսէս կ'առաջնորդէր այրերը: Բառին կամ անունին «դառն» իմաստը կու գայ այդ կնոջ ապրած տառապանքներէն:

Աճառեան կ'ըսէ. Մարուճ - ծագումն ինձ անյայտ. մի անգամ գտնում եմ յիշատակուած 1679 թուին:

Մարուֆ - արաբերէն յայտնի բառից. գտնում եմ երկու տարբեր անթուական յիշատակարաններում, որոնցից մէկը գրուած է 1331 թուից ուշ, միւսը՝ 1609 թուից ուշ:

Եւ ի վերջոյ՝

Մարուշ - Մարիի կրճատումներից, ինչպէս Վարդուհիին դառնում է Վարդուշ, Տիգրանուհին՝ Տիգուշ, Զայկուհին՝ Զայկուշ եւ Մարին՝ Մարուշ:

Անկէ ետք երբ մէկը անունս լսելով ըսէր՝ «Ռուսական անուն է, չէ՞», անմիջապէս կը պատասխանեի դասը շատ լաւ սորված աշակերտուհիի պէս.

–Ո՛չ, մաքուր հայկական է, Մարիի կրճատումներէն, ինչպէս Զայկուհին կ'ըլլայ Զայկուշ, Տիգրանուհին՝ Տիգուշ, Մարին ալ կ'ըլլայ Մարուշ:

Ա՛լ կոնակս ամուր էր, ոչ ոք պիտի կարենար ամբաստանել զիս ռուսական կամ գանելիք անուն մը ունենալուս համար:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

ԱՐՏԱԽԱԶԴ ՏՆԿԻԿԵԱՆԻ (ԱՊՈՒ ԱԶԻԶ)

ԵՒ

ԲԵՆԵԼՈՒԲ ՏՆԿԻԿԵԱՆԻ


Զանգուցեալներուն հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 31 Յուլիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի՝ Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Զալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան բարերարներուն յիշատակի թարմացման հանդիպում տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հանգուցեալ

ՅԱՐՈՒԹ ԶԻԼԻՍԵԱՆԻ



Զանգուցեալի մահուան Բ. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 31 Յուլիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Զալեպ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Շահինեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՀԵՐՄԻՆԷ ՇԱՀԻՆԵԱՆԻ

մահուան սուգին:

Զանգուցեալի ըստասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 31 Յուլիս 2022-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Զալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիլմբօջեան-Պօղիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբօջեան
Զաշուապահ՝ Յովիկ Պարսումեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Փորձեցէ՛ք ցոյց տալ ձեր լաւագոյն կողմերը: Աւելի լաւ կ'ըլլայ, եթէ թոյլ տաք, որ իրադարձութիւնները իրենց հունով զարգանան:



Ցուլ

Վստահեցէ՛ք ձեր ներքին ձայնին, հետեւեցէ՛ք անոր հրահանգներուն եւ պիտի հասնիք ձեր ակնկալիքներուն:



Երկուորեակ

Քննադատուելու պարագային, փորձեցէ՛ք հակակշռի տակ պահել ձեր յուզական վիճակը եւ չզայրանալ:



Խեցգետին

Շարժուան ասարտին, ձեր անձնական յարաբերութիւններուն մէջ բարելաւումներ պիտի արձանագրուին:



Առիւծ

Պիտի յաղթահարեք բոլոր այն գործերը, որոնք նոր ոճ կը պահանջեն: Շարժուան ասարտին հաճելի անակնկալներ ձեզի կը սպասեն:



Կոյս

Արագ եւ առանց ջանքի չէք հասնիր ձեր նպատակներուն: Ամեն բան ճիգ կը պահանջէ:



Կշիռք

Այս շաբաթ կարելիութիւն ունիք յաջողութեան հասնելու: Լաւ գաղափարներ պիտի յառաջանան, որոնք գործի պիտի վերածեք առանց որեւէ մեկուն աջակցութեան:



Կարիճ

Յարմար ժամանակ է նոր գիտելիքներ եւ փորձառութիւն ձեռք բերելու համար: Օգտագործեցէ՛ք ընձեռուած առիթները:



Աղեղնաւոր

Հաճելի շաբաթ մը կը սպասե՛ք ձեզի: Օգտուեցէ՛ք արձակուրդէն եւ ճամբորդութեան մը ձեռնարկեցէ՛ք:



Այծեղջիւր

Այս շաբաթ ստիպուած էք պայքարիլ լուրջ մրցակիցներու դէմ: Յանդուութեամբ պաշտպանեցէ՛ք ձեր տեսակետը:



Ջրհոս

Հանգիստ եւ արդիւնաւետ շաբաթ մը պիտի անցընէք: Այս առիթը նոր ծրագիրներ մշակելու սկիզբ պիտի հանդիսանայ:




Ձուկ

Մի՛ յետաձգեք կարելոր գործերը: Փորձեցէ՛ք կարգաւորել ձեր աշխատանքը, որպէսզի կուտակուած գործերը չխանգարեն ձեր առօրեան:



Նուշիկ Սողոյեան-Առաքելեան

ՈՒՂԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ



Յաճախ մեր ուղեղը լարուած վիճակի մէջ կը պահենք եւ փոխարէնը ոչինչով կը սնանենք ու կը հանգըստացնենք զայն:

Ամբողջ օրը համակարգիչով կամ հեռաձայնով գրադելե ետք, պետք չէ ակնկալել, որ ան շնորհակալութիւն յայտնէ մեզի: Առողջ ուղեղ մը ունենալու համար հարկ է բաւարար քննալ, կանոնաւոր արթննալ, երկու գաւաթ զառք շուր խմել ու մարզանք ընել:

Ուղեղը կ'ատէ ծխախոտը, որովհետեւ ան վատ ազդեցութիւն կը ձգէ իր վրայ: Ան կ'ատէ նաեւ միսն ու ճարպը: Միսը ուղեղը չի սնուցաներ, այլ՝ մարմինը: Հետեւաբար պետք է օգտագործել քիչ ճարպ կամ ջերմութիւն պարունակող միսի տեսականի, ինչպէս՝ հաւն ու ձուկը: Ուղեղին համար վնասակար է նաեւ աղը: Սակայն ան կը սիրէ քաղցրեղէնը, մանաւանդ՝ տուրմն ու մեղրը:

Երկար աշխատանքէ ետք, երբ մեր ուղեղը ծանրաբեռնուի եւ յոգնի՝ կարելի է սուրճ խմել: Իսկ անոր լաւագոյն ընկերը ժպիտն է: Շատ օգտակար է ժպտիլը, յաճախակի ժպտիլը եւ մեր ունեցած պարզ ու ամենափոքր

արժանիքներով ուրախանալը: Մարդոց հետ յարաբերութիւն մշակելը նոյնքան կարեւոր է ուղեղի առողջութեան համար: Միւս կողմէ նոր բաներ սորվիլը, գիրքեր կարդալը, զբօսնուլն ու ճամբորդելը առողջ ուղեղ ունենալու երաշխիքներն են:

Ուղեղի առողջութեան բացայայտումը մեր շարժումներն են: Եթէ կը շարժիք, ուրեմն առողջ եք: Պարելն ալ լաւ ազդեցութիւն կը ձգէ ուղեղին վրայ, որովհետեւ ուղեղային տարբեր հիւանդութիւններ կը կանխարգիլէ:

Այնուամենայնիւ եթէ քննալէ երկու ժամ առաջ հեռաձայնը մէկ կողմ դնենք, հաճելի գիրք մը ընթերցենք եւ լաւ ու հանգիստ քունի մը պատրաստուինք, որ առնուազն 6 ժամ տեսէ, ուղեղը կը մաքրուի:

Եկէք փորձենք ու շուտով պիտի նկատենք դրական փոփոխութիւններ:

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՄԵՄՆԵՐ

Սօտաւորապէս յիսուն հազար տարի առաջ, մարդիկ բոյսերն ու համեմատելի օգտագործած են ուտելիքներ պատրաստելու ընթացքին: Որոշ երկիրներ նոյնիսկ պատերազմներ մղած են անոնց համար, որովհետեւ անոնք ոսկիէն աւելի թանկարժէք ու կարելոր են մեր առողջութեան համար: Անոնք ոչ միայն մեր ճաշերուն իւրայատուկ համ ու հոտ կու տան, այլեւ չափազանց օգտակար են: Ուրեմն, եկէ՛ք թունենք անոնցմէ քանի մը հատը:

Կասիա

Ըստ գիտական եւ բժշկական ուսումնասիրութիւններու, կասիան կարելոր տեղ կը գրաւէ բորբոքումներու դէմ պայքարի եւ արեան ճարպերուն քանակը նուազեցնելու իմաստով: Անկա դիրաւ ճարպերը կը հալեցնէ եւ կ'օգնէ նիհար ու բարեձեւ մարմին ունենալու:

Քրքում

Ասիկա հնդկական ճաշատեսակներու իւրայատուկ համեմունքն է, որ կը պայքարի քաղցկեղի, սնկային հիւանդութիւններու, բորբոքումներու եւ մանրէներու դէմ:

Կոճապղպեղ

Ասիկա հազարաւոր տարիներ առաջ օգտագործուած է ստամոքսային եւ աղիքային խանգարումները կարգաւորելու իբր բնական միջոց: Օգտակար է նաեւ յղութեան շրջանին ստամոքսը հանդարտեցնելու եւ վիրահատական գործողութիւններէն ետք ստամոքսային բարեկարգումը վերականգնելու համար:

Անկա մարմինի շաքարին քանակը կը նուազեցնէ եւ արեան շրջանառութիւնը բնականոն կը դարձնէ: Այսպիսով ան մեզմէ կը հեռացնէ սրտանոթային հիւանդութիւններուն հաւանականութիւնը:





Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ պասքեթի աղջկանց հանրապետական բաժակի աւարտական մրցումին, Դամասկոսի «Սաուրա»-ն հերթական երկրորդ անգամ ըլլալով յաջողեցաւ տիրանալ ախոյեանութեան, պարտութեան մատնելով Ռահտեն՝ 57 - 52 արդիւնքով:



- Ասիոյ պասքեթի տղոց ախոյեանական մրցումներուն, Սուրիոյ հաւաքականը շարունակելով իր ձախող արդիւնքները ծանր պարտութիւն մը եւս կրելով զիջեցաւ Նիւ Չելանտայի կազմին եւ 97 - 58 արդիւնքով պարտուեցաւ: Սոյն մրցաշարքին, Սուրիոյ հաւաքականը յաջողեցաւ արձանագրել միայն մէկ յաղթանակ, պարտութեան մատնելով Խազախստանը՝ 77/67 արդիւնքով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՏԵԼՈՆԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՅԱՄ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՄԱԶԱԿԱՆԻ ԽԱՂԱՑՈՂԻՆ ՀԵՏ

Ըստ Sport.es-ին, Սպանիոյ փոխախոյեան Պարսելոնան համաձայնութեան հասաւ աշխարհի ախոյեան ֆրանսայի հաւաքականի եւ սպանական Սելիլիայի 23-տարեկան պաշտպանողական խաղացող Ժիլ Կունտէի հետ: Տեղափոխութիւնը տեղի պիտի ունենայ յաջորդ շաբաթ: Բաթայոնեական ակումբը Կունտէի հետ պիտի ստորագրէ 4 տարուան պայմանագրութիւն: Ֆութպոլիստը եւս փափաք ունի իր մարզական կեանքը շարունակելու Պարսելոնային հետ: Transfermarkt-ը Կունտէի փոխադրութեան արժեքը 60 միլիոն եւրո յայտարարած է:



ՌՈՆԱԼՏՈՆ ՄՏԱԴԻՐ Ե ՏԵՂԱՓՈԽՈՒԻԼ ԱԹԼԵԹԻՔՈ ՄԱՏՐԻՑ

Անգլիական Մանչեսթեր Իւնայթըտի 37-տարեկան փորթուկալցի յարձակող Զրիստիանո Ռոնալտոն պատրաստ է տեղափոխուիլ Աթլետիկո Մատրիտ, որ յառաջիկայ տարեշրջանին մաս պիտի կազմէ «Չեմպիընզ Լիկ»-ին: Ըստ փոխանցուած տեղեկութիւններուն, Մանչեսթըր Իւնայթըտը համաձայն է մէկ տարուան վարձակալութեամբ առիթ տալ Ռոնալտոյին, եթէ ան երկարաձգէ իր պայմանագրութիւնը մինչեւ 2024 թուական: Ըստ անգլիական «Mirror»-ին, Ռոնալտո 2021-ին լքելով Իտալիոյ Իվէրթոնը, միացաւ անգլիական խումբին, ստորագրելով երկու տարուան պայմանագրութիւն:



ԷՏԵՐ ՄԻԼԻԹԱՌՈՒՅ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սպանիոյ ախոյեան եւ «Չեմպիընզ Լիկ»-ի գաւաթակիր Ռեալ Մատրիտը երկարաձգեց պրագիցի պաշտպան Էտեր Միլիթաուոյի հետ պայմանագրութիւնը: Նոր պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ Յունիս 2028: Միլիթաուոյի նախորդ պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ 2025: Անոր տարեկան աշխատավարձը 3,5 միլիոն եւրոյն դարձաւ 7 միլիոն եւրո:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 400)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոզեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Անկարելորդ դէպք: Լեւոն Շանթի թատերգութիւններէն. «..... Մարդը»:
 - Սիամանթոյի ծննդավայրը: Մուրթ, աղօտ:
 - Հակառակ՝ անձնական դերանուն: Հայ գուսան:
 - Առածը կ'ըսէ. «Մինչեւ Շուշանը, ժամը կ'արձակուի»:
- Անձնական դերանուն:
- Մարմնի մտել մասեր: Հակառակ՝ 360: Կաթիլ:
 - Արական անուն: Յուցական դերանուն: Ձայնաւոր տառեր:
 - Ցաւի ճիչ: Հակառակ՝ 2009:
 - Կարող: Վահան Փափազեանի ծածկանունը:
 - Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ տառի մը անունը: Որպէս:
 - Հակառակ՝ փակած, կպած: Հակառակ՝ անզօր:
 - Շրջան, պտոյտ իմաստը ունեցող արական անուն: Իգական անուն:
 - Արա Նախշարեանի հեղինակութեամբ Լիզպոնի գործունեութեան հիմը տղոց նուիրուած պատմութիւնը. «Սրբազան ..»:

Ուղղահայեաց

- Պնակի ձեւ ունեցող եւ սկիհին վրայ իբրեւ կափարիչ գործածուող սպաս:
- Ոչխարի բուրդ՝ խուզուած ու մաքրուած: 2019-ին Համահայկական խաղերու ջախի վառման հանդիսութեան վայրը:
- Միտքը չնչին բաներու կապած: Հակառակ՝ քաց:
- 5060: Հակառակ՝ արտ, դաշտ: Անիրաւէր:
- Աստուածաշունչին մէջ յիշուած Ս. Յովակիմին կինը: Հակառակ՝ գոյութիւն ունին: 305:
- Ռումբի տեսակ: 5030:
- Եական բայ: Հակառակ՝ հաստատական պատասխան: Սնունդ, ուտելիք:
- Շողկապ:
- Հակառակ՝ հին վերջի հետք: Մայրական սնունդ:
- Անվերջնատառ՝ Յակոբի եղբայրը Աստուածաշունչին մէջ: Աստուալիոյ քաղաքներէն:
- Պչրանք, գարդարանք: Երկբարբառ:
- Փիլիսոփայ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 399)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ն	ա	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
2	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
3	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
4	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
5	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
6	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
7	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
8	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
9	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
10	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
11	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն
12	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն	ն

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿՐԵՐՄԻ 1/8 24° 41°	ԵՐԵՐՄԻ 2/8 24° 40°	ՉՈՐԵՐՄԻ 3/8 23° 38°	ՀԻՎԵՐՄԻ 4/8 24° 39°	ՈՐԲԱՐ 5/8 24° 39°	ՇԱՐԱՐ 6/8 24° 39°	ԿԻՐԱԿ 7/8 24° 38°
--	--	---	---	---	---	---

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱԳ ԵՒ ԶՐՕՐԶՆԵՔ՝ ՆՈՐՕՐԶՆԵԱԼ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻԿՈՆՈՎ

Եկեղեցական տոները, յատկապես Հայ Եկեղեցւոյ տաղաւար տոները՝ հոգեւոր արթնութեան, հաւատքի ամրապնդման եւ ներքին ուրախութեան հրաւիրող հոգեթով պահեր են:

Կիրակի, 24 Յուլիս 2022-ին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցի-

նուիրուած շարականներով լիցքաւորեց հաւատացեալներուն հոգիները:

Սրբազան Հօր առընթերակաւ ներն էին՝ Արժ. Տ. Գառնիկ Զիւլ. Զափանեան եւ Արժ. Տ. Չարեհ քիւլ. Շաքարեան: Ս. Խորանին սպասարկեցին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ուսա-



ներն ներս Սուրբ եւ Ամահ Պատարագով յիշատակուեցաւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հինգ Տաղաւար տոներէն երրորդը՝ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Զրիստոսի Այլակերպութեան (Պայծառակերպութեան) տօնը, որ ծախսօթ է նաեւ Վարդավառ անունով:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եպիսկոպոսական հանդիսաւոր Պատարագ մատուցեց եւ օրուան պատգամը հաւատացեալներուն ուղղեց Սրբ. Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին, ներկայութեամբ՝ Ազգային Վարչութեան անդամներու եւ մեծաթիւ հաւատացեալներու:

նողներ, որոնք ժամանակաւորապէս Հալէպ կը գտնուին:

Առաջնորդ Սրբազան Հայրը հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը, քննարկ ունենալով հե-



տելեալ աստուածաշնչական համարը. «Տեսակը Անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն» (Յի 1.14): Սրբազան Հայրը



Հանդիսաւոր թափօրով եւ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ եկեղեցի մուտք գործեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Եկեղեցւոյ Դպրաց դասը Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եւ Այլակերպութեան տօնին

Զրիստոսի այլակերպութեան խորհուրդը բացատրեց ներկաներուն, դիտել տալով, որ Այլակերպութեան տօնը այն պահն է, երբ Զրիստոս իր աստուածութիւնը բացայայտեց

Մարինա Հիւլքոշեան-Պողիկեան
Շար. էջ 9

«ԿԱԿԱՉ» ՄԱՆԿԱՄԱՍՈՒԻ ԱՄԱԿԵՐՁԻ ՀԱՆՐԵՍ

ՍՕ Խաչի ընկերային ծառայութեան բազմաճիւղ գործունեութեան մէկ բաժինը կը հանդիսանայ «Կակաչ» մանկամտօրի ծառայութիւնը, որուն շնորհիւ բազմաթիւ մայրեր,

Փայասեան այնուհետեւ ներկայացուց մանկամտօրի ուսուցչուհիները եւ անոնց աշխատանքը մանկամտօրէն ներս:

Ապա, ծնողներուն ծափողջյն-



իրենց երեխաները ապահով ձեռքերու յանձնած ըլլալու գոհունակութեամբ, իրենց աշխատանքը շարունակելու կարելիութիւնը ունեցած են:

Սովորութիւն դարձած է մանկամտօրի տարեշրջանի աւարտին հանդէս մը կազմակերպել այն փոքրիկներուն մասնակցութեամբ, որոնք երեք տարեկան դարձած են եւ մանկապարտեզ պիտի յաճախեն:

Շաբաթ, 23 Յուլիս 2022-ին, ՍՕ Խաչի Ընկերաբժշկական Կեդրոնի «Գ. Համալեան» սրահէն ներս տեղի ունեցաւ «Կակաչ» մանկամտօրի ամալերջի հանդէսը ՍՕԻ-ի Շըրջանային Վարչութեան, 20 շրջանաւարտ փոքրիկներու ծնողներուն եւ հարազատներուն ներկայութեան:

Յանձնախումբին ատենապետուհի Մարիա Փայասեան ողջունեց

ներով, փոքրիկները ուսուցչուհիներուն առաջնորդութեամբ սրահ մտան եւ ներկայացուցին փունջ մը



մանկական երգեր ու արտասանութիւններ, որոնք սորված էին մանկամտօրէն ներս:

Ետքը տեսերիզով ցուցադրուե-



ներկաները եւ յայտնեց, որ մանկամտօրը նախադպրոցական շըրջան մըն է, ուր երեխան իր տարիքային առանձնայատկութիւններով եւ խմբային դրութեամբ կը ստանայ ֆիզիքական ու բարոյական դաստիարակութիւն: Ան կը սորվի խօսիլ, երգել եւ արտայայտուիլ իր տարեկիցներուն ընկերանալով:

ցաւ մանկամտօրի 2021-2022 տարեշրջանի գործունեութիւնը:

Աւարտին, փոքրիկներուն բաժնուեցան վկայագիր եւ նուէրներ: Ներկաները շնորհաւորելով փոքրիկներուն առաջին վկայականը՝ ուրախ տրամադրութեամբ բաժնուեցան:

Թղթակից